




ԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԼՄԵՐՆ ԵՍՏՈՒԾՈՅ ԿԵԹՈՒՂՒԿՈՍ ԵՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ ԾԱՅՐԵԳՈՅՆ ՊԼՏՐԻԵՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԵՒԵՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏՆԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԵԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԼԵՆԻ

Աւտարանի սիրոյ ողջոյն մատուցանեմ առ ամենայն Եկեղեցիս Հայոց, որք կան ընդ հովաւեալ Սեծին Ռուսիոյ Ինք-

նակալ (Թագաւորութեան: Եղօթս առնեմ՝ վասն ձեր ամենեցուն հանդերձ միաբանական ուխտիւս, կալ մնալ ձեզ ի շնորհս Տեառն ի ճշմա-

րիտ հաւատոս Եստուածպաշտու-
թեան ի սէր, և ի պատուիրան Ե-
ւետարանի ընկերսիրութեան, որոյ
յայտնացոյց նշանաւ միայն ճանաչէ
զձեզ աշխարհ թէ դուք Քրիստոս-
սին էք և Քրիստոս ձեր:

Յետ ողջունական բանիս, այժմ
մասնաւոր կոնդակաւս պիտի խօ-
սիմ ընդ քեզ ժողովուրդ Հայոց,
պարզ լեզուով և ոճով, որպէս զի
դու չքմեղս լինելով չասես թէ չեմ
հասկանար և չեմ իմանար գրոց լե-
զուն և այլն:

Ես գիտեմ քո բնաւորութիւն,
դու շուտով կը գայթաղիս և դու-
ցէ մեղադրելով կասես. Հայրիկ զը-
նաց կաթուղիկոս եղաւ, մոռացաւ
իւր պարտք և ամեն բան. միայն մի
անգամ չոր ողջունի կոնդակ մի հը-
րատարակեց, ոչ խրատ խօսեց, ոչ
պատուէր տուաւ, բերան փակեց,
գրիչ վար դրաւ և այնպէս անհոգ
նստած է Եջմիածնայ վեհարանում:
չգիտենք, ինչ կը խորհի, ինչ կ'մտա-
ծէ և ի՞նչ պիտի անէ, սպասում
ենք և մեր համբերութիւն հատաւ:

Եյո՛ այդպէս կը թուիմ դատո-
ղաց առաջ, որովհետեւ չկամիմ փող
հարկանել ի հրապարակս, այլ պէտք
է պատմեմ քեզ, որ դու իմանաս
խելամուտ լինիս, համբերես ու կար-
ճես քո մեղադրանքը:

Քաւ թէ ես կը սրտմտիմ կամ
խուսափել կուզեմ քո մեղադրան-
քէն, զի քաջ գիտեմ թէ այդպէս
եղեր է մեր նախորդաց և ինձ հա-
մար էլ պիտի լինի, և ո՞վ կարող է

բաղմամիտ, բաղմաբերան և պա-
հանջող ժողովուրդի դատաստանէն
խոյս տալ:

Օրհնեալ լինի ժողովուրդ, դա-
տել պահանջել իւր իրաւունքն է,
եթէ չը դատի, չպահանջէ՝ գիտեմ
ես թէ էն ժամանակը մեք ո՞րչափ
անհոգ և անպիտան կը դառնամք.
միայն թէ ուղիղ դատի, տարաժամ
չպահանջէ և գիտենայ ժամանակ և
թէ ո՞րչափ պահանջել պէտք է. «Օ-
րամենայն իրաց՝ ժամէ և ժամա-
նակ», ասում է Սողոմոն:

Դու իմանալ կուզես թէ ի՞նչ կը
խորհի Հայրիկ. ի՞նչ պիտի խորհի,
Սաղմոս կը կարդայ, «Երանի՛ որ
խորհի զաղքատն և զտնանկն»: Եյ-
ժըմ թողած ամեն բան, աղքատ-
ներու համար կը խորհիմ. սոված ժո-
ղովրդեան համար կը խորհիմ: Եւ
այս հրաւէր կարդամ քեզ, ժողո-
վուրդ Հայոց, որ դու էլ պահ մի
թողուս ամեն բան և միայն աղքա-
տին համար խորհիս. որպէս զի Քաւ-
թի և Յիսուսի երանութեանց ար-
ժանի լինիս: Երդ սկսիմ մի համա-
ռօտ հաշիւ տալ քեզ և դու իմա-
նաս թէ Հայրիկ իւր միաբանու-
թեամբ ի՞նչ վիճակում պաշարուած
ու պարաւանդուած է:

Եյսօր գրեթէ վեցերորդ ամիսն
է այն օրէն, երբ ես արժանի եղայ
ողջունել Եջմիածնայ Սայր Եթող՝
շուտ անցան գնացին այնչափ ով-
սաննաներ և մեծաղղորդ կեցցէներն
և այժմ խոր լուծիւն և տխրու-
թիւն տիրեցին մեր շրջապատը և

միայն լսուում են անօթի, քաղցած գիւղական ժողովուրդին և ընտանեաց մանրիկ զաւակներուն լացն ու աղաղակ:

Այն ամենայ միջոցում գրեթէ հազարէն շատ աւելի զանազան խնդիրներ եկան կուտուեցան առաջ: Այդ խնդիրներ բազմաթիւ էին, մեծ մասն ամուսնական կնճռալեց գործեր էին, որք խնդրում էին լուծել և շուտափոյթ լուծել: Մի մասն ևս գիւղական ժողովուրդի խնդիրներ էին, որք զաս զաս խմբովին եկան ներկայացան հետզհետէ և մատուցին իրենց համախօսական թղթեր, որոց թիւ հասնում էր մինչև հարիւր յիսունէն աւելի, և ինչէին խնդրում: Հայրիկ, քահանայ կուղեմք, քահանայ: Ոմանք հաստատելով ասում էին, Հայրիկ, մեր գիւղեր՝ կան որ հինգ տարի, ութ տարի և մինչև տասն տարի է, որ ծխատէր ու սեփական քահանայ չունիմք, որչափ դժուարութեամբ ուրիշ գեղաններէ քահանայ կը մուրամք, մանաւանդ ձմեռը ձիւն ու բութ եղած ժամանակ: Ոմանք թէ, մեր գիւղերու քահանաներ ութսուն տարին անցուցած, խիստ ծերացած զաւամութեան վիճակին հասած են, էլ չեն կարող պաշտօն կատարել: Ժողովուրդի այս խնդրոց համար չեմ ուզեր մանրամասն գրել. «Արարատի» մէջ թող կարգան ընթերցողներ Արշէն էրեցի քարոզ:

Այս խնդիրներ ամէն ժամանակ սովորաբար եղած են և այնքան վը-

հատեցուցիչ չեն, որեւիցէ եղանակաւ կարելի է լուծել, կարգադրել և գոհ անել խնդրատուներն:

Բայց եկ տես, որ խնդրոց ամենամեծ մասն՝ գաղթականաց խնդիրն է, բոլորովին չքաւորած, կրտոր մի հացի կարօտ գիւղական ժողովուրդի պաղատանքն է, որոնք խումբ խումբ իրենց ընտանիքով, մանրիկ զաւակներով սկսեալ աշնանէն մինչև ցայսօր՝ կուգան կըլեցուն Այմիածնայ Հայրապետանոցը: Եւ տես դու ինչ անհասնողութիւն տեսարան բացվում է մարդոյն աչքին առաջ: Եւ ո՞վ կարող է գթօտ աչքով նայել ու չարտասուել:

Գիտես թէ էքեալ ու յուսահատ ժողովուրդի հոգին ի՞նչ անձկութեան մէջ բանաստեղծ կը դառնայ, և քանի՞ բնական ու սրտառուչ նկարագիր կը հանէ թղթերուն վրայ և իւր կրած ցաւեր պատմելու մի ճարտասան կը լինի: Աս մօրիկ արի վշտագին ոգւով, դուք էլ մօրիկ արէք, ժողովուրդ Հայոց, և տեսէք ինչ կասեն:

Հայրիկ՝ մեք ոչ ամուսնական խնդիր ունիմք և ոչ քահանայի, մեք թողինք մեր քահանայն մեր գիւղի եկեղեցւոյն պահապան. եկեղեցին ու քահանայն մնացին առանց ժողովուրդի, թողինք մեր շտեմարան, ալիւրի փեթակ, հացն ու թոնիր. տանտիկին ելաւ տնէն, կտրեցաւ ծուխն երգիքէն, թողինք մառնի եղեր, լի ա-

մաննեցով պանիրներ, թողինք մեր կանաչ արտեր, մեր դուժման ու հարօրներ, թողինք աննման Մաշկերտու հայրենիք: Հապա մեր սուրբ Յօհաննու երեքխորան վանք, Նըպատ լեռ. Լփրատայ սուրբ գետ, ամեն մեր ինչքեր կողոպուտ տուինք, առինք միայն մեր ընտանիք հարսներ ու հասած աղջիկներ եկանք քրիստոնեայ երկրին ապաստանեցանք: Մեք շատ զոհեր տուինք մեր ընտանեաց սիրոյն համար, որպէս զի ազատենք զանոնք առեւանգող բիրտ քիւրտերուն ձեռքէն: Ի՜նչ Հայրիկ, մեք այժմ ուրիշ բան չենք խնդրեր, մեզ պէտք է միայն պատսպարան ու հաց, զի մեք անտուն անօթեան մնացինք:

Այսպէս, ժողովուրդ Հայոց, աղուէսներ սեպհական որջ ունին, երկնից թռչուններ բոյն, ինչպէս ասաց Քրիստոս որ գլուխ դնելու տեղ չունէր: Միթէ Քրիստոսի նման իւր հաւատացեալ գաղթական Հայ ժողովուրդ ունի՞ իւր գլուխ դնելու տեղ:

Արսի սահմանագլխէն սկսեալ գաղթական ժողովուրդի տարածութեան մի ծայր հասած է մինչև Երևանայ դաշտի գիւղեր, թէև մեծագոյն մասն Արսի նահանգում տեղաւորուած են: Չեմ մոռանայ երախտագէտ ոգւով յիշել աստ է յանուն ազգին յայտնել իմ շնորհակալութիւնս Երևանայ և Արսի նահանգապետներուն, որք բարձրագոյն հրամանաւ և իրենց բարեսիրտ ազնուութեամբ թոյլ տուին

գաղթական անտերունչ ժողովուրդին, որ մինչև դարնան հիւրնկալուին Հայոց գիւղերում:

Եւ ի՞նչ պիտի լինի դարուն, որ եկաւ ահա, միթէ անաշխարհիկ անբնակ բունաւեր թռչնոց համար դարուն աւետարե՞ր է: Որոց համար աւաղ, որչափ յարմար է բանաստեղծին երգ.

«Ինձ համար չէ դարնան գալը»:
Նոքա պիտի յիշեն Բազրեանդայ և Սուկաւէտ ծաղկազարդ ու ջրաշատ լեռան դարուն:

Օրհնեալ լինին Շիրակայ և Երարատեան դաշտերու գիւղական բնիկ Հայ ժողովուրդներ, որք հիւրասէր հայր Արարհամու պէս իրենց դռներ բացին, ուր մտան տեղաւորեցան խեղճ ու թշուառ գաղթական ընտանիքներ:

Վանի՞ դռն ու դժար է, Բազրեանդայ ճոխ տանուտէր, որոյ դուռ բաց էր, հացալից սեղան պատրաստ ամեն հիւրերուն, նա մարագի մի քունջ հաւու պէս ծուարեցաւ իւր ընտանիքով և ձագերով և լաւագոյն համարեց այս խղճուկ կեանքը, որ ազատեցաւ քիւրտերու սոսկալի բռնութենէն:

Այսպէս առ ժամանակ մի թէպէտ գիւղերում զետեղուած են գաղթական ընտանիք, այլ ամէն օր և շաբաթ գիմումեն Մայր Աթոռի դուռը, ոչ միայն կարօտութեան համար, զի մեզ շատ յայտնի է նոցա դառնավիշտ վիճակ, թողունք օրապահիկ հացի սնունդ. կը տես-

համ աչքովս իրենց պատառոտած կերպարանք, սոսկ կտաւէ շապկի մի կարօտ, մանկիկներ մերկ ու բոբիկ: Չարչարանքի վարժուած ժողովուրդը դեռ համբերում է այս տառապանքի մէջ և իւր ապագայն մտածելով հարցնում է, Հայրիկ, մեր վախճանը՝ ի՞նչ պիտի լինի:

Իսկ ես խոր մտածութեան մէջ վարանած, չգիտեմ թէ ինչ պատասխանեմ կամ յուսադրեմ այդ էքեալ ու վհատեալ ժողովուրդ. կրսկբիմ՝ վարդապետական քարոզ կարդալ, ամէն բան ու ժամանակի հանգամանքներ պարզ կերպով բացատրել իրենց և յորդորել, որ դարձեալ իրենց հայրենիք վերագառնան, վասն զի կարելի չէ, որ Արարատեան երկիր նոր գաղթականութիւն ընդունի, որովհետեւ իւր բնիկ ժողովուրդ այնչափ աճեր ու բազմապատկերէ, որ այլեւ մշակելի հողեր բաւական չեն իրենց համար. դուք մի յուսաք թէ բնիկ երկրին ժողովուրդ թիզ մի տեղ ձեզ բաժին կուտայ. հաց ու պատսպարան տուաւ ձեզ մի փոքր ժամանակի համար, կարծում էք հող էլ պիտի տայ:

Իսկ ձեր Աշակերտի դաշտում շատ հարուստ էիք ձեր ընդարձակ հողերով և իբրեւ տանուտեր կապրէիք, գիտէք ի՞նչ դառն է ձեզ համար երբ հողատիրութենէն զրկուելով՝ ծառայ և մշակ դառնաք այստեղ և այնտեղ, ձեր սեպհական հողերը օտարներ գրաւեն:

Ձէ, Հայրիկ, չէ, դու չգիտես,

մեր քաշած անտանելի զրկանքներ, թէ միայն ընչեց յափշտակութիւն լինէր, այդ ոչինչ էր, զի մեք շատ վաղուց ի վեր սովորած եմք այդ կերպ զրկանքներուն, բայց մեր աչքի առաջ մեր ամուսիններ և մեր աղջիկները ամենայն բռնութեամբ վայրենի քրդեր յափշտակում են և կը տանին բռնի կերպով Վրիստոսի հաւատք ուրանալ կուտան. այլ ևս մեք կարող եմք հանդուրժել:

Թո՛ղ, Հայրիկ, թող, մեք ծառայ լինիմք, մշակ դառնամք միայն ապահով ապրինք մեր ընտանիքով ու զաւակներով:

Այսպէս կը մտածի կը խօսի ու պատասխան կուտայ վշտակիր ժողովուրդ և ո՛վ կարող է մեղադրել զինքն:

Թողունք գաղթական ժողովուրդին այս ցաւն ու տառապանք, մի այլ տառապանք ևս տառապանքի վերայ ծանրանալով՝ սաստկապէս ճընշում է Մայր Աթոռը:

Յայտնի է, որ երկու տարի իրարու վերայ երաշտութիւն լինելով՝ երկինք անձրեւ չի տուաւ որ երկիր հաց բուսցնէր. ուստի Արարատեան դաշտի և մի քանի ուրիշ գաւառներու գիւղական ժողովուրդ ճաստիկ չքաւորած են, թէեւ քաղաքներում ցորեան ալիւր խիստ առատ է, սակայն երկրագործ ժողովուրդ փող չունի. սորա համար ճարահատած խումբ խումբ դիմում են Մայր Աթոռին իբրեւ նորա հոգեծին զա-

ւակներ ժտում են կամ հաց կամ փող և ուրիշ ոչինչ:

Այսպէս քաղցած ու նեղուած մեր Առաքելի սուրբ հօր որդիքներ իրաւունք ունին իրենց հօր տան և Աթոռին ղիմել, հապա հայրիկն ում ղիմէ, սասցէք յողովուրդ հայոց, եթէ ոչ առ ձեզ:

Աստի հրաւեր կարգալով առ բոլոր սիրելի ազգայինս Առաքիոյ, կոչեմ ձեզ ի գլխաւորին, ի կարեկցութիւն գիւղական քաղցած ժողովուրդին: Այլ եթէ խնդրում եմ, որ համայն ազգայինք հաւասարապէս ընդհանուր հանգանակութիւն բանան, զի այդ մասին բարձրագոյն հրամանի պէտք կայ, այլ մասնաւորապէս կարող անձիքներէն կամաւոր նպաստ և ողորմութիւն կը խնդրեմ յանուն աղքատին, որ զիս իբրեւ իւր ձեռք կարկառում է:

Արկառեցէք ուրեմն և դուք ձեր ձեռք այն բաղմաթիւ աղքատ զաւարտներուն, որոնք Աշխատանքայ տաճարին տակ շարուած սպասում են կոչնակի ձայնին, տեսնանք թէ ինչպէս վազելով կը թափեն ի սեղանատուն: Միայն իրենց փոր կըլտացնելով բաւական չէ, այլ սեղանէն ելնելով կը ժողովին Ահարանին և զանձատան զբան առաջ և սկսում են իրենց «Հայր մեր», այսպէս. մեր փորը կշտացաւ, Աստուած չէն պահէ Սուրբ Աշխատանքայ վանք, բայց Հայրիկ, մեր ընտանիք, մեր մանրիկ տղէք անօթի նուազած են տան մէջ հալած աչքերով սպասում

են որ շուտով դառնամք իրենց օրապահիկ հաց տանեմք: Այլու երեք օրով անօթի մայրեր կան, որոց ծրծերուն կաթ ցամքած է, կաթնկեր երեխաներն էլ իրենց գրկին մէջ ցամքած ու մարած են, Աստուծոյ սիրոյն լինի, տուէք մեզ հաց կամ փող տանենք հասուցենք մեր սոված ընտանիքներուն:

Այսնկարագիր պիտի շարժէ անշուշտ մեր աղնուազութ մեծատանցեամեն զատակարգ ժողովուրդին սիրտ. պիտի շարժէ նաև Հայոց մայրերու սիրտ, իրենց առատ և ճոխ սեղանի փշրանքներէն բաժին հանել աղքատ զաւարտներուն: Այսինքն թէ ես էլ արժանի լինիմ կատարել իմ հայրական պարտիքս և իբրեւ սպասաւոր մատակարարեմ այդ փշրանքներ կարօտած խեղճերուն:

Խոստովանիլ պէտք է որ մեր սակաւ փշրանքներ նպաստ և ողորմութիւն մի մի կաթիլ ջուր են, երբէք չեն բաւական պատքած ժողովուրդին ծարաւն անցունել, դուրս համար մի յորդառատ գետ պէտք է, և այդ գետ բղխում է Մեր Մեծ խնամակալ Ապսեր տէրութեան ականէն, որ իբրեւ երկնուց հօր պատկեր ներկայանում է աշխարհիս վերայ. գիտէ, Նորին Մեծութիւն իւր բարի կամք ի գործ դնել և առատապէս բանալով իւր անսպառ աղբիւրին ական և լիապէս ջուր տալ իւր հաւատարիմ հպատակ ծարաւած ժողովուրդին:

Այնչա՛հ կմնայ յայնժամ աղօ-

Թել և հանապազ աղօթել մեր գր-
թառառ Ասյսեր Թանկագին կե-
նաց համար, որոյ կեանքը բովան-
դակ երկրին և ժողովուրդի բարօ-
րութեան կեանքն է:

Աղօթեմ՝ և վասն ձեր ժողովուրդ
Հայոց, զուք ևս ընդունելով Հայ-
րիկին հրաւեր ձեր փոքրիկ փոքրիկ
աղբերակներու ակներ բանաք և
ծարաւած ժողովրդին բաժակ բա-

ժակ ջուր բաշխէք, գիտելով և հա-
ւատալով որ վարձատրիչ Տէր Աս-
տուած ձեր բաժակներու փոխարէն
երկնից արքայութեան զրախտի գե-
տերէն պիտի բաշխէ, որոյ ջուրն
կենաց անմահական ջուր է:

Իցիւ թէ արժանի անէ Տէր ա-
մեն ծարաւած հոգիներուն ըմպել
այդ կենաց ջուրէն և օրհնել զանուն
նորա յաւիտեանս. Ամէն:

Գրեցաւ Կոնդակս ի 28 Մարտի 1894 տմի Փրկչական
և բառ տամարիս ՌՅԵԳ, ի Մայր Աթոռ Հայաստանեայց
ի Ա Էջմիածին

Ի Վաղարշապատ:

(Իսկականի վերայ ստորագրած է)

Մ Կ Ր Տ Ի Զ

ԿԱԹՈՒՂՈՍ ԵՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

